


նորոգ աշխատարեւալ Առձեռն-Ատլասի սկիզբը
դրուած Համառօտ, բայց ամբողջ աշխարհագրա-
կան-տեղագրական բազմակողմանի տեղեկու-
թիւնքը:

Այս մասին կը յաջորդէ "Համառօտ տե-
սութիւն ի վրայ աշխարհագրական խուզարկու-
թեանց" (էջ 409—414):

Հ. Բ. Գ.



Գ Ո Ր Ո Ւ Ն

ԲԱՆԱՍՑԵԴԾԱԿԱՆ

ԳՈՐԵԱՆ ՕՐԵՐԸ

Ի՛նչպէս կը սիրեն՝ անոյշ այն օրեր,
Երբ նորոյ զարնան
Կը բացուի վերէն երկնազոյն կամարն.
Եւ երբ կը դառնան
Պայծառ ու ջերին աւուրը մեզ համար:
Հոս հերով սպիտակ
Կը փայլեն ձիւնէն խորագոյն ձորեր.

Հին ջերմ՝ արեւի տակ
Բըլուրք կ'ամբասնան դէպ ի վեր երկին:
Մարդիկ անյապաղ
Խնդութեամբ ի դաշտ ելել կը փութան.
Եւ մանկան ալ խաղ
Կ'անուռ նոր ոգի մը կենդանութեան.
Տղայ մ'ալ ես աշխոյժ
Կ'ըլլամ. եւ յանդոր ըզմայման զօրկն
Կ'օրորուիմ՝ անոյշ:

Սիւսան.

Թրգմ. Հ. Յ. Տ.

